



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆ



ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ «ՍՈՒՐՄԱԼՈՒ» ԱՌԵՎՏՐԻ
ԿԵՆՏՐՈՆՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ՊԱՅԹՅՈՒՆԻ ԵՎ
ՓԼՈՒՋՄԱՆ ՀԵՏԵՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԱՐՏԱՀԵՐԹ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ

ԵՐԵՎԱՆ 2022



Բովանդակություն

Հապավումներ	2
I. Նախաբան	3
II. Մեթոդաբանություն	5
III. Կատարված փաստահավաք աշխատանքներ	6
IV. Իրավական վերլուծություն	14
Գլուխ 1. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի փորձի ներկայացում և վերլուծություն	15
Գլուխ 2. Ներպետական օրենսդրությունը օգոստոսի 14-ին «Սուրմալու» առևտրի կենտրոնում տեղի ունեցած պայթյունի դեպքի առնչությամբ	20
Գլուխ 3. Ներպետական օրենսդրությունը սեպտեմբերի 21-ին «Սուրմալու» առևտրի կենտրոնում տեղի ունեցած փլուզման դեպքի առնչությամբ	26
V. Առաջարկություններ	35

Հապավումներ

ՄԻՊ աշխատակազմ

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ

ԱԻՆ

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն

ՄԻԵԴ

Մարդու իրավունքների եվրոպական դատարան

ՔՏՀԱ,

ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային

տեսչական մարմին

անվտանգության տեսչական մարմին

ԱԻՆ ՓԾ

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության

փրկարար ծառայություն

Կոնվենցիա

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների

պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիա

I. Նախարան

1. ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության կողմից տարածված հայտարարության համաձայն¹ 2022 թվականի օգոստոսի 14-ին, ժամը 13:23-ին Ճգնաժամային կառավարման ազգային կենտրոնն ահազանգ է ստացվել այն մասին, որ Երևանի «Սուրմալու» առևտրի կենտրոնում տեղի է ունեցել պայթյուն: Հրդեհի բարդության «Թիվ 2» կանչով դեպքի վայր են մեկնել ԱԻՆ ՓԾ Երևան քաղաքի փրկարարական վարչության հրշեջ-փրկարարական ջոկատներից վեց մարտական հաշվարկ, ավտոսանդուղք, Ճգնաժամային կառավարման ազգային կենտրոնի օպերատիվ, Փրկարարական ուժերի վարչության հատուկ նշանակության փրկարարական աշխատանքների իրականացման կենտրոնի փրկարարական, կինոլոգիական, Բժշկական ապահովման վարչության, Հրդեհաշիջման և փրկարարական աշխատանքների կազմակերպման բաժնի հերթապահ խմբերը, Հոգեբանական աջակցության բաժնի հերթապահ հոգեբանը և գազաձխապաշտպան ծառայության ավտոմեքենան: Հայտարարվել է հրդեհի բարդության «Թիվ 3» կանչ. դեպքի վայր են մեկնել ԱԻՆ ՓԾ Երևան քաղաքի փրկարարական վարչության հրշեջ-փրկարարական ջոկատներից ևս չորս մարտական հաշվարկ:

2. ԱԻՆ կողմից 21.08.2022 թվականին տարածված տեղեկության համաձայն որոնողափրկարարական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել է 16 քաղաքացու դի²: Երևան քաղաքի բուժկենտրոններ է դիմել 63 քաղաքացի, որոնցից 3-ը շարունակում է բուժում ստանալ, իսկ մնացածը ստանալով համապատասխան բուժօգնություն, դուրս են գրվել: Փրկարարները փլատակներից դուրս են բերել 10 տուժածի³:

3. 2022 թվականի սեպտեմբերի 21-ին զանգվածային լրատվության միջոցներով տարածվել է տեղեկություն⁴ այն մասին, որ «Սուրմալու» առևտրի կենտրոնի վնասված շինությունը մասնակի փլուզվել է, դեպքի վայր են մեկնել ԱԻՆ ՓԾ Երևան քաղաքի

¹ Հղումը՝ <http://mes.am/hy/accidents/item/2022/08/15/1104/>

² Եվս մեկ քաղաքացի համարվում է անհետ կորած:

³ Հղումը՝ <http://mes.am/hy/accidents/item/2022/08/21/1030/>

⁴ Հասանելի է հետևյալ հղումներով՝ <https://www.azatutyun.am/a/32044826.html>,
<https://news.am/arm/news/721441.html>

փրկարարական վարչության հրշեջ-փրկարարական ջոկատից մեկ մարտական հաշվարկ և Փրկարարական ուժերի վարչության հատուկ նշանակության փրկարարական աշխատանքների իրականացման կենտրոնի փրկարարական խումբը: Ըստ լրատվամիջոցների՝ սեպտեմբերի 21-ին տեղի ունեցած փլուզման հետևանքով տուժել էր 3 անձ, փլատակների տակ է մնացել քաղաքացիներից մեկի ավտոմեքենան:

4. Տեղի ունեցած պատահարների առնչությամբ ՄԻՊ աշխատակազմում սկսվել են ուսումնասիրություններ, մասնավորապես՝ Պաշտպանի ներկայացուցիչներն այցեր են իրականացրել պայթյունի արդյունքում տուժած քաղաքացիներին՝ այդ թվում նաև հիվանդանոցային պայմաններում բուժում ստացող⁵: Պատահարների առնչությամբ տեղեկատվության հավաքագրման նկատառումներից ելնելով գրություններ են հասցեագրվել իրավասու պետական մարմիններին՝ պայթյունի և փլուզման կապակցությամբ վերջիններիս կողմից կատարման ենթակա գործողությունների վերաբերյալ: Թեմայի վերաբերյալ իրականացվել է մամուլի ու սոցիալական հարթակների մեդիամոնիտորինգ:

5. Զեկույցը նպատակ է հետապնդում հավաքագրել, վերլուծել և ամփոփել 2022 թվականի օգոստոսի 14-ին Երևանի «Սուրմալու» առևտրի կենտրոնում տեղի է ունեցած պայթյունի վերաբերյալ ստացված տեղեկությունները, ինչպես նաև ներկայացնել իրավասու պետական մարմինների կողմից կատարման ենթակա գործողությունների վերաբերյալ Պաշտպանի դիրքորոշումը: Միաժամանակ, զեկույցի շրջանակներում քննարկման առարկա են դարձվելու օգոստոսի 14-ի պայթյունին հաջորդած սեպտեմբերի 21-ի փլուզումը և այդ առնչությամբ իրավական մեխանիզմների գործադրման հնարավորությունները:

6. Եվս մեկ անգամ ցավակցում ենք զոհերի ու վիրավորների ընտանիքներին, երախտագիտություն հայտնում փրկարարներին ու բուժաշխատողներին իրականացրած անձնվեր աշխատանքի համար:

⁵ Տե՛ս Պաշտպանի կողմից նախաձեռնված գործողությունների վերաբերյալ հայտարարությունը՝ <https://www.ombuds.am/am/site/ViewNews/2325>

II. Մեթոդաբանություն

1. «Սուրմալու» առևտրի կենտրոնում տեղի ունեցած պայթյունի և դրան հաջորդած փլուզման առնչությամբ ՄԻՊ աշխատակազմում հավաքագրվել են լրատվական աղբյուրներում տարածված տեղեկությունները:

2. Հավաքագրված տեղեկությունների ճշգրտման, ինչպես նաև էական նշանակություն ունեցող այլ տվյալների ստացման նպատակով գրություններ են հասցեագրվել իրավասու մարմիններին:

3. Զեկույցի համար տեղեկատվական հիմք է հանդիսացել նաև պայթյունի ու փլուզման վայրում տուժողների ու վկաների հետ Պաշտպանի ներկայացուցիչների վկայությունները:

4. Զեկույցը կառուցվածքային առումով բովանդակում է հետևյալ բաժինները՝ կատարված փաստահավաք աշխատանքների արդյունքում ստացված տեղեկությունների ներկայացում, ձեռք բերված փաստերի նկատմամբ կիրառելի իրավակարգավորումների ներկայացում, համադրում ստացված տվյալների հետ և վերլուծություն, ինչպես նաև Պաշտպանի առաջարկությունները զեկույցում ներկայացված խնդիրների ու դրանց լուծումների առնչությամբ:

III. Կատարված փաստահավաք աշխատանքներ

5. ՄԻՊ աշխատակազմում իրականացվել է 2022 թվականի օգոստոսի 14-ին Երևան քաղաքի «Սուրմալու» առևտրի կենտրոնում տեղի ունեցած պայթյունի և հրդեհի, ինչպես նաև դրա կապակցությամբ իրավասու պետական մարմիններում գործողությունների ամբողջական դիտարկում: Ոսումնասիրության են ենթարկվել զանգվածային լրատվության միջոցներում կատարված հրապարակումները:

6. Ըստ տարածված տեղեկությունների՝ օգոստոսի 14-ին ժամը 13:23-ին Ճգնաժամային

կառավարման ազգային կենտրոն ահազանգ է ստացվել, որ «Սուրմալու» առևտրի կենտրոնում տեղի է ունեցել պայթյուն: Հրդեհի բարդության «Թիվ 2» կանչով դեպքի վայր են մեկնել ԱԻՆ ՓԾ Երևան քաղաքի, ինչպես նաև մարզային փրկարարական վարչության



հրշեջ-փրկարարական ջոկատներ և մարտական հաշվարկներ, ավտոսանդուղք, Ճգնաժամային կառավարման ազգային կենտրոնի օպերատիվ, Փրկարարական ուժերի վարչության հատուկ նշանակության փրկարարական աշխատանքների իրականացման կենտրոնի փրկարարական, Հրդեհաշիջման և փրկարարական աշխատանքների կազմակերպման բաժնի հերթապահ խմբերը և Հոգեբանական աջակցության բաժնի հերթապահ հոգեբանը:

7. Հրապարակումների համաձայն՝ ԱԻՆ հայտնած տվյալներով «Սուրմալու» առևտրի կենտրոնում տեղի ունեցած պայթյունի հետևանքով զոհվել է 16 անձ, ևս մեկ անձ համարվում է անհետ կորած⁶:

⁶ Հղումը՝ <https://www.azatutyun.am/a/31987272.html>

8. ՄԻՊ աշխատակազմում իրականացված զանգվածային լրատվության միջոցների մշտադիտարկման արդյունքում պարզվել է, որ ՔՏՀԱ տեսչական մարմինը «Երևանի պահաճոների գործարան» ՓԲ ընկերությունում («Սուրմալու» տոնավաճառ) տեղի ունեցած պայթյունի առիթով հայտնել է, որ դեռևս 2021 թվականի մարտի 9-ից 16-ը ներառյալ



ստուգում է իրականացրել հիշյալ ընկերությունում գործող առևտրի և հասարակական սննդի օբյեկտներում՝ տեխնիկական և հրդեհային անվտանգության օրենսդրության պահանջների պահպանման վերաբերյալ:

9. Ստուգման արդյունքում տեսչական մարմնի մասնագետները հայտնաբերել են ՀՀ ԱԻ նախարարի կողմից 18.06.2015 թվականին հաստատված հրդեհային անվտանգության կանոնների պահանջների մեկ տասնյակից ավելի տարբեր բնույթի խախտումներ:

10. Մասնավորապես, հայտնաբերվել են հետևյալ խախտումները.

- կրպակաշարերը, տաղավարները տեղակայված չեն շենք-շինություններից ոչ պակաս 8մ հեռավորության վրա,
- շինարարական հիմնատարրերը տողորված չեն հրապաշտպան լուծույթով,
- 15 մարդուց ավելի միաժամանակյա ներկայությամբ սենքերի (Помещение) դռները չեն բացվում դեպի դուրս,
- օդային էլեկտրահաղորդման գծեր են անցկացված հրդեհավտանգ հիմնատարրերով տանիքների վրայով
- 55 քմ գերազանցող մակերեսով բնական լուսավորություն չունեցող սենքերում (помещение) տեղակայված չի եղել հակածխային պաշտպանության համակարգ,
- արտաքին հրդեհաշիջման համար նախատեսված օբյեկտների տարածքում բացակայել են առնվազն 1 հիդրանտն ու հակահրդեհային ջրավազանը,

- շենքերը սարքավորված չեն հրշեջ ծորակներով կահավորված ներքին հակահրդեհային ջրացանցով այնպես, որ յուրաքանչյուր կետ ցողվի 1x2,5 լ/վրկ ջրի շիթով,
- 3500 քմ-ն գերազանցող երկհարկանի առևտրի սրահի սենքերը (Помещение) սարքավորված չեն հրդեհաշիջման ինքնաշխատ համակարգով,
- անկախ մակերեսից 3 և ավելի հարկայնություն ունեցող առևտրի կազմակերպության շենքում սարքավորված չի եղել հրդեհաշիջման ինքնաշխատ համակարգ,
- առևտրի և հասարակական նշանակության սննդի օբյեկտները սարքավորված չեն եղել հրդեհի ազդանշանման ինքնաշխատ համակարգերով,
- հակահրդեհային ինքնաշխատ համակարգերը չեն գտնվել սարքին վիճակում,
- «Ա», «Բ», «Վ» կարգի շինություններում կրակմարիչները տեղադրված չեն եղել հրդեհի հնարավոր օջախներից 30 մետրից ոչ ավել հեռավորության վրա:

11. **Պարզվել է նաև, որ տեսչական մարմինը «Երևանի պահածոների գործարան» ՓԲ ընկերության շենքում հայտնաբերված խախտումները վերացնելու կարգադրագրեր է տվել ընկերության տնօրինությանը:** Վերջինիս նկատմամբ տեսչական մարմնի կողմից կիրառվել է նաև վարչական պատասխանատվության միջոց՝ համաձայն Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 187-րդ հոդվածի 1-ին մասի:

12. 2022 թվականի օգոստոսի 15-ին Պաշտպանի աշխատակազմի կողմից գրություն է հասցեագրվել տեսչական մարմնին պարզելու համար արդյո՞ք հայտնաբերված խախտումները վերացնելու վերաբերյալ կարգադրագրերում նշված պահանջների կատարման վերահսկման (իրականացմանը հետևելու) ընթացքում տեսչական մարմնի կողմից ձեռնարկվել են միջոցներ:

13. Ի պատասխան վերոնշյալ գրության՝ տեսչական մարմնի կողմից Պաշտպանին հասցեագրված գրությամբ հայտնվել է, որ համաձայն «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և



անցկացման մասին» օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի՝ **միևնույն պետական մարմնի կողմից միևնույն տնտեսավարող սուբյեկտում և միևնույն բնագավառում ստուգումները բարձր ռիսկայնության սուբյեկտների մոտ իրականացվում են ոչ ավելի հաճախ, քան տարին 1 անգամ:** «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» օրենքը վերստուգումներ իրականացնելու հստակ ժամկետներ չի սահմանում: Ըստ տեսչական մարմնի՝ նշված օբյեկտում նախորդ ստուգմամբ հայտնաբերված թերությունների և խախտումների վերացման վերաբերյալ 2021 թվականի ապրիլի 16-ին տրված կարգադրագրի պահանջների կատարման փաստացի վիճակը պարզելուն ուղղված **վերստուգումը նախատեսված է եղել իրականացնել 2022 թվականի 3-րդ եռամսյակի վերջ:** ՔՏՀԱ տեսչական մարմնի կողմից վերահսկվում է կարգադրագրերի պահանջների կատարման փաստացի վիճակը (այսինքն՝ խախտումը փաստացի վերացվել է, թե ոչ), կարգադրագրերում նշված խախտումների վերացման ընթացքը ՔՏՀԱ տեսչական մարմնի կողմից վերահսկվող գործառույթ չէ (ՔՏՀԱ տեսչական մարմնին օրենսդրորեն նման իրավասություն վերապահված չէ):

14. Միաժամանակ, 2022 թվականի սեպտեմբերի 21-ին զանգվածային լրատվության միջոցներով տարածվել է տեղեկություն⁷ այն մասին, որ «Սուրմալու» առևտրի կենտրոնի

⁷ Հասանելի է հետևյալ հղումներով՝ <https://www.azatutyun.am/a/32044826.html>, <https://news.am/arm/news/721441.html>

վնասված շինությունը մասնակի փլուզվել է: Ըստ լրատվամիջոցների՝ սեպտեմբերի 21-ին տեղի ունեցած փլուզման հետևանքով տուժել էր 3 անձ, փլատակների տակ է մնացել քաղաքացիներից մեկի ավտոմեքենան:

15. 2022 թվականի սեպտեմբերի 29-ին Պաշտպանի աշխատակազմի կողմից գրություն է հասցեագրվել ՀՀ գլխավոր դատախազություն, մասնավորապես, ի թիվս այլնի, հետևյալ հարցադրմամբ. 2022 թվականի սեպտեմբերի 21-ին տեղի ունեցած փլուզման դեպքով նախաձեռնվել է քրեական վարույթ, եթե այո՝ **ի՞նչ փուլում է այն գտնվում, ինչ հանգամանքներ են հայտնի դարձել և արդյո՞ք առևտրի կենտրոնի վնասված շինությունների ապամոնտաժման գործողություններ չիրականացնելը պայմանավորված է եղել քննչական կամ ապացուցողական գործողությունների կատարման, այդ թվում՝ համապատասխան փորձաքննություններն իրականացնելու անհրաժեշտությամբ:**

16. Ի պատասխան առաջադրված հարցին՝ ՀՀ գլխավոր դատախազության կողմից հայտնվել է, որ դեռևս **16.09.2022թ. փորձաքննություն իրականացնող փորձագետների կողմից հայտնվել է, որ տարածքում աշխատանքներն ամբողջ ծավալով կատարվել են և նշված շինությունների հետագա տեղազննման անհրաժեշտություն առկա չէ:**

17. Այսօրվ, ձեռք բերված տեղեկությունների համաձայն՝ մինչ Երևանի «Սուրմալու» առևտրի կենտրոնում օգոստոսի 14-ին տեղի ունեցած պայթյունը՝ դեռևս 2021 թվականի մարտի 9-ից 16-ը ներառյալ տեսչական մարմինը ստուգում է իրականացրել հիշյալ ընկերությունում գործող առևտրի և հասարակական սննդի օբյեկտներում՝ տեխնիկական և հրդեհային անվտանգության օրենսդրության պահանջների պահպանման վերաբերյալ: Ընդ որում, կատարված ստուգումների արդյունքում հայտնաբերված մի շարք խախտումների առնչությամբ կայացրել է վարչական պատասխանատվություն առաջադրող որոշում և տվել է կարգադրագրեր՝ հայտնաբերված խախտումները վերացնելու վերաբերյալ:



18. Չնայած նախորդ կետով շարադրված հանգամանքին՝ տեսչական մարմնի կողմից արձանագրված խախտումները վերացված լինելը չի հաստատվել, հսկողական որևէ մեխանիզմ գործադրված չի եղել այդ առնչությամբ ընդհուպ մինչև պայթյունի վրա հասնելը:

19. Ավելին՝ անգամ պայթյունի վրա հասնելուց հետո՝ որևէ պետական մարմնի կողմից չեն գործադրվել միջոցներ հետագա փլուզումները կանխելու, հանրության համար վտանգ ներկայացնող շինությունն ապամոնտաժելու ուղղությամբ, որպիսի հանգամանքը պատճառ է հանդիսացել «Սուրմալու» առևտրի կենտրոնի վնասված շինության սեպտեմբերի 21-ին տեղի ունեցած մասնակի փլուզման, ինչի հետևանքով տուժել է 3 անձ, փլատակների տակ է մնացել քաղաքացիներից մեկի ավտոմեքենան:

20. Ինչպես արդեն իսկ վկայակոչվել է Պաշտպանի աշխատակազմի կողմից կարգադրագրերի կատարման ընթացքի վերաբերյալ տեղեկատվության ստացման նպատակով ՔՏՀԱ տեսչական մարմնին է հասցեագրվել գրություն «Երևանի պահաճոների գործարան» ՓԲ ընկերությունում («Սուրմալու» տոնավաճառ) տեղի ունեցած պայթյունի առնչությամբ: Գրությամբ, մասնավորապես հայցվել է տեղեկություն՝ արդյոք հայտնաբերված խախտումները վերացնելու վերաբերյալ կարգադրագրերում նշված պահանջների կատարման վերահսկման (իրականացմանը հետևելու) ընթացքում տեսչական մարմնի կողմից ձեռնարկվել են միջոցների:

21. Ի պատասխան տեսչական մարմինը հայտնել է, որ տեսչական մարմնի կողմից վերահսկվում է կարգադրագրերի պահանջների կատարման **փաստացի վիճակը** (այսինքն՝ խախտումը փաստացի վերացվել է, թե՛ ոչ), կարգադրագրերում նշված **խախտումների վերացման ընթացքը** տեսչական մարմնի կողմից **վերահսկվող գործառույթ չէ** (տեսչական մարմնին օրենսդրորեն նման իրավասություն վերապահված չէ):

22. Այսինքն, ըստ էության տեսչական մարմինն արձանագրել է, որ իրենց կողմից վերահսկվում է կարգադրագրերի պահանջների կատարման փաստացի վիճակը, և վերջիններս չունեն օրենսդրական գործիքակազմ խախտումների վերացման ընթացքը վերահսկելու համար: **Ստացվում է, որ անգամ եթե որևէ օբյեկտում, որտեղ ստուգողական գործողություններ են իրականացվել տեսչական մարմնի կողմից, հայտնաբերվել են այնպիսի խախտումներ, որոնք հանրության համար ծայրահեղ վտանգի աղբյուր են, տեսչական մարմինը չպետք է հնարավորություն ունենա հետևելու հայտնաբերված խախտումների վերացմանը, դրանց շարունակվելու դեպքում՝ միջամտելու գործընթացներին:**

23. Հարկ է արձանագրել, որ Պաշտպանի աշխատակազմի կողմից տեսչական մարմնից պահանջվել է ներկայացնել մանրամասն տեղեկատվություն՝ հայտնաբերված խախտումները վերացնելու **կարգադրագրերում նշված պահանջների կատարման վերահսկման** (իրականացմանը հետևելու) **ընթացքում տեսչական մարմնի կողմից ձեռնարկված միջոցների վերաբերյալ:**

24. Այսպիսով, Պաշտպանը բարձրացրել է տեսչական մարմնի կողմից հայտնաբերված խախտումները վերացնելու կարգադրագրերում նշված պահանջների կատարման **վերահսկման ուղղությամբ ձեռնարկված միջոցների հարցը**, մինչդեռ տեսչական մարմնի կողմից ներկայացված պատասխանն այն մասին է, որ վերջիններս չունեն օրենսդրական մեխանիզմ նման հսկողության իրականացման համար:

25. Միաժամանակ, օգոստոսի 14-ին տեղի ունեցած պայթյունից հետո՝ սեպտեմբերի 21-ին «Սուրմալու» առևտրի կենտրոնի վնասված շինության մասնակի փլուզումը փաստում է, որ որևէ պետական մարմնի կողմից չեն գործադրվել միջոցներ հետագա փլուզումները կանխելու, անձանց կյանքի և առողջության համար վտանգ ներկայացնող շինությունն ապամոնտաժելու ուղղությամբ, ինչի հետևանքով սեպտեմբերի 21-ի փլուզման հետևանքով տուժել է 3 անձ, մեկ անձի հասցվել է գույքային վնաս:

26. Այս առնչությամբ Պաշտպանի կողմից գրություն է հասցեագրվել ՀՀ գլխավոր դատախազություն, մասնավորապես, ի թիվս այլնի, հետևյալ հարցադրմամբ. 2022 թվականի սեպտեմբերի 21-ին տեղի ունեցած փլուզման դեպքով նախաձեռնվել է քրեական վարույթ, եթե այո՝ **ի՞նչ փուլում է այն գտնվում, ինչ հանգամանքներ են հայտնի դարձել և**

արդյո՞ք առևտրի կենտրոնի վնասված շինությունների ապամոնտաժման գործողություններ չիրականացնելը պայմանավորված է եղել քննչական կամ ապացուցողական գործողությունների կատարման, այդ թվում՝ համապատասխան փորձաքննություններն իրականացնելու անհրաժեշտությամբ:

27. Ի պատասխան հայտնվել է, որ դեռևս 16.09.2022թ. քրեական վարույթում ներգրավված փորձաքննություն իրականացնող փորձագետների կողմից հայտնվել է, որ տարածքում աշխատանքներն ամբողջ ծավալով կատարվել են և նշված շինությունների հետագա տեղազննման անհրաժեշտություն առկա չէ: **Այլ կերպ ասած՝ Դատախազության կողմից նշվել է, որ փորձագետի կողմից տարվող աշխատանքներն ամբողջությամբ ավարտվել են դեռևս 16.09.2022 թվականին և տվյալ շինությունները տեղազննելու անհրաժեշտությունը բացակայել է:**

28. Վերը նկարագրված իրադարձությունների արդյունքում 16 անձ է մահացել և մեկ անձ անհետ կորած է համարվել, ըստ տարբեր աղբյուրների առնվազն վեց տասնյակից ավել անձանց առողջությանը պատճառվել են տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ ու գույքային կորուստներ: Պաշտպանը հարկ է համարում սույն զեկույցի շրջանակներում անդրադառնալ արձանագրված պատահարներին նախորդող և հաջորդող գործընթացներին, մասնավորապես՝ պետական տարբեր գերատեսչությունների կողմից կատարման ենթակա գործողություններին, ինչպես նաև դրանց կատարման ընթացքի խնդիրներին՝ որպես անձանց իրավունքների խախտումները հետագայում կանխարգելելու կարևոր միջոց:

IV. Իրավական վերլուծություն

29. Ձեկույցի այս հատվածում ներկայացված իրավական վերլուծություններն արտացոլում են միջազգային և ներպետական վերաբերելի իրավակարգավորումները, ինչպես նաև ՄԻԵԴ կողմից կիրառելի դրույթներին տրված մեկնաբանությունները:

30. Առաջին գլխի շրջանակներում ներկայացված է նկարագրված իրադարձությունների փաստական հանգամանքների նկատմամբ կիրառելի ՄԻԵԴ փորձը:

31. Նկատի ունենալով, որ սույն զեկույցի նախորդ հատվածում, ըստ էության, ներկայացված են երկու տարբեր իրադարձություններ, մասնավորապես՝ «Սուրմալու» առևտրի կենտրոնում օգոստոսի 14-ին տեղի ունեցած պայթյունը և դրան հաջորդող՝ սեպտեմբերի 21-ին տեղի ունեցած առևտրի



© Hakob Poghosyan / hetq.am



© Hakob Poghosyan / hetq.am

կենտրոնի վնասված շինության մասնակի փլուզումը՝ իրավական վերլուծության հատվածում ևս նշված իրադարձությունների վերաբերյալ դիրքորոշումները, դրանց վերաբերելի իրավակարգավորումները և մեկնաբանությունները ներկայացված են հաջորդ գլուխներում:

Գլուխ 1. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի փորձի ներկայացում և վերլուծություն

32. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը մի շարք որոշումներում⁸, անդրադառնալով կյանքի իրավունքի ապահովման՝ պետության պոզիտիվ պարտականություններին, արձանագրել է, որ Կոնվենցիայի 2-րդ հոդվածով երաշխավորված կյանքի իրավունքի պաշտպանության նպատակով անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելու պոզիտիվ պարտականությունը նախևառաջ ենթադրում է պետության առաջնահերթ պարտականություն՝ գործարկելու օրենսդրական և վարչական մեխանիզմներ, որոնք ուղղված կլինեն կյանքի իրավունքի խախտման սպառնալիքից արդյունավետ պաշտպանությունն ապահովելուն:

33. Ավելին՝ մասնավորեցնելով կյանքի իրավունքի ապահովման վերաբերյալ իր դիրքորոշումը՝ ՄԻԵԴ-ն իր մեկ այլ որոշմամբ⁹ արձանագրել է.

«Այս պարտականությունն անկասկած կիրառվում է հատկապես վրանգավոր գործունեության համալրեքստում, որտեղ, հատուկ շեշտադրում պետք է արվի խնդրո առարկա գործունեության առանձնահատկություններին ուղղված կանոնակարգումների վրա, մասնավորապես՝ կապված մարդկանց կյանքի համար հնարավոր ռիսկի մակարդակի հետ: Այդ իրավակարգավորումները պետք է ուղղված լինեն գործունեության լիցենզավորման, գործունեության մեկնարկման, շահագործման, անվտանգության և վերահսկման բնագավառում հարաբերությունների կարգավորմանը և պետք է պարտադիր դարձնեն բոլոր շահագրգիռ անձանց համար ձեռնարկել գործուն միջոցներ՝ ապահովելու այն քաղաքացիների կյանքի իրավունքի արդյունավետ

⁸ Տե՛ս օրինակ՝ Օսմանն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով թիվ 23452/94 որոշումը, պար. 115, Հղումը՝ <https://hudoc.echr.coe.int/fre#%7B%22itemid%22%3A%22002-6781%22%7D>

Պոլ և Օդրի Էդվարդսն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով թիվ 46477/99 որոշումը, պար. 91, Հղումը՝ <https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22appno%22%3A%2246477/99%22%7D>

Մահմուտ Կայան ընդդեմ Թուրքիայի գործով թիվ 22535/93 որոշումը, պար. 85, Հղումը՝ <https://hudoc.echr.coe.int/fre#%7B%22itemid%22%3A%22002-6676%22%7D>

⁹ Օներյիլդիզն ընդդեմ Թուրքիայի գործով թիվ 48939/99 որոշումը, պար. 90, Հղումը՝ <https://hudoc.echr.coe.int/fre?i=001-67614>

պաշտպանությունը, որոնց կյանքը կարող է վտանգվել տվյալ գործունեության արդյունքում:

(...)

Ամեն դեպքում, տվյալ կարգավորումները պետք է նախատեսեն նաև համապատասխան ընթացակարգեր՝ հաշվի առնելով տվյալ գործունեության տեխնիկական կողմերը, համապատասխան գործընթացներում առկա թերությունները և տարբեր մակարդակներում պատասխանատուների կողմից թույլ տված սխալները հայտնաբերելու համար:»:

34. Կոնվենցիայի 2-րդ հոդվածով երաշխավորված իրավունքի ապահովմանն ուղղված պետության պարտավորություններն այսքանով չեն սահմանափակվում: Այն դեպքում, երբ անձանց կյանքի իրավունքը խախտվել է այնպիսի հանգամանքներում, որոնք կարող են ենթադրել պետության որոշակի պատասխանատվություն, այդ կանոնակարգումը պարտավորություն է նախատեսում պետության համար ապահովելու իր տրամադրության տակ եղած բոլոր միջոցներով համարժեք պատասխան՝ դատական կամ այլ, որպեսզի առկա օրենսդրական կամ վարչական գործիքակազմի կիրարկմամբ պաշտպանվի կյանքի իրավունքը և այդ իրավունքի ցանկացած խախտում կանխվի և պատժվի¹⁰:

35. Միաժամանակ, ՄԻԵԴ կողմից արձանագրվել է, որ եթե հաստատվում է, որ պետական պաշտոնյաներին կամ իրավասու մարմիններին վերագրվող թերացումը (անփութությունը) ավելին է քան պարզապես անզգուշությունը, քանի որ **համապատասխան**



¹⁰ Տե՛ս mutatis mutandis, Օսմանն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով թիվ 23452/94 որոշումը, պար. 54:

սուբյեկտները, լիովին գիտակցելով հավանական հետևանքները և անտեսելով իրենց վերապահված լիազորությունները, չեն ձեռնարկել միջոցներ, որոնք անհրաժեշտ և բավարար էին վտանգավոր գործունեությանը բնորոշ ռիսկերը կանխելու համար (տե՛ս, mutatis mutandis, Օսմանն ընդդեմ Միացյալ Թագավորության գործը, պար. 116), ապա վերջիններիս մեղադրանք առաջադրված չլինելը կամ քրեական հետապնդման ենթարկված չլինելը կարող է համարվել Կոնվենցիայի 2-րդ հոդվածի խախտում (տե՛ս, Օներյիլդիզն ընդդեմ Թուրքիայի գործը, պար. 48-50):

36. Ամփոփելով վկայակոչված որոշումների շրջանակներում ՄԻԵԴ կողմից կյանքի իրավունքի ապահովման ոլորտում պետության պոզիտիվ պարտականությունների վերաբերյալ արտահայտված դիրքորոշումը՝ հարկ է կատարել որոշ անկյունաքարային եզրահանգումներ.

- կյանքի իրավունքի պաշտպանության նպատակով անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելու պետության պոզիտիվ պարտականությունը ենթադրում է պետության առաջնահերթ պարտականություն՝ **գործարկելու օրենսդրական և վարչական մեխանիզմներ**, որոնք ուղղված կլինեն կյանքի իրավունքի խախտման սպառնալիքից **արդյունավետ պաշտպանությունն ապահովելուն**: Այսինքն, պետությունը կրում է պոզիտիվ պարտականություն ոչ միայն ստեղծելու օրենսդրական հիմքեր անձանց կյանքի իրավունքի խախտման սպառնալիքը չեզոքացնելու համար, այլ նաև պարտավոր է իր վարչական լծակներով ապահովել կյանքի իրավունքի խախտման սպառնալիքից արդյունավետ պաշտպանություն: Կոնվենցիայի 2-րդ հոդվածով երաշխավորված կյանքի իրավունքի պաշտպանությանն ուղղված պետության պարտականություններից վերը ներկայացվածները չպետք է դիտարկվեն իրարից անջատ, այլ պետք է գործարկվեն որպես մեկ միասնական նպատակին, այն է՝ կյանքի իրավունքի պաշտպանությանն ուղղված հաջորդական գործողությունների տրամաբանական շղթա: Օրենսդրական գործիքակազմի ստեղծումն ու մեխանիզմների նախատեսումն ինքնին բավարար համարվել չեն կարող արձանագրելու համար, որ պետությունը կատարել է իր պարտականությունները և ձեռնարկել է բոլոր միջոցները անձանց կյանքի իրավունքի ապահովման նպատակով: Անհրաժեշտ է, որ պետության կողմից սահմանված իրավակարգավորումները գործնականում ապահովեն արդյունավետ պաշտպանություն, որպեսզի հնարավոր լինի



արձանագրել, որ պետությունը բավարարել է իր պոզիտիվ պարտականությունը: Այսինքն, գործնականում իրացրել է իր տրամադրության եղած բոլոր մեխանիզմները՝ հնարավորինս ապահովելու անձանց կյանքի իրավունքի պաշտպանությունը:

- ՄԻԵԴ որոշումների

ամփոփման արդյունքում կատարված հաջորդ եզրահանգումը հանգում է հետևյալին. բացի նրանից, որ պետության կողմից պետք է ստեղծվի բավարար օրենսդրական դաշտ և կիրառվեն համապատասխան մեխանիզմները անձանց կյանքի իրավունքին սպառնացող վտանգի չեզոքացման համար, պետությունը պարտավոր է նաև անձանց կյանքի իրավունքի խախտումներն առաջացրած պայմաններն ու պատճառները դարձնել քննության առարկա՝ գործարկելով իր տիրապետության տակ եղած ամբողջ գործիքակազմը կյանքի իրավունքի խախտման հանգեցրած գործընթացներում առկա թերությունները և տարբեր մակարդակներում պատասխանատուների կողմից թույլ տված սխալները հայտնաբերելու համար: Այս առնչությամբ հարկ է արձանագրել, որ այն դեպքերում, երբ անձանց կյանքի իրավունքը խախտվել է այնպիսի հանգամանքներում, որոնք կարող են ենթադրել պետության որոշակի պատասխանատվություն (պետական համակարգի որևէ օղակում թերացում), պետությունը պարտավոր է գործարկել իր տրամադրության տակ եղած բոլոր միջոցները ապահովելու համար կյանքի իրավունքի պաշտպանությունը:

37. **Այսպիսով, պետությունը պարտավոր է (1)ստեղծել անձանց կյանքին վտանգ սպառնացող ոլորտներում գործունեության իրականացումը կանոնակարգող օրենսդրություն, որի շրջանակներում ներառված կլինեն նման գործունեության մեկնարկին, թույլտվությունների ստացմանը, անվտանգությանն ու վերահսկմանը վերաբերող իրավահարաբերությունները կարգավորող դրույթներ, (2)ապահովել այդ կարգավորումների գործնականում արդյունավետ կիրառումը և (3)անձանց կյանքի իրավունքի խախտման դեպքերում իրականացնել պատշաճ քննություն՝ խախտման**

հիմք հանդիսացող հանգամանքների և դրանց հնարավոր կանխման կամ
հետևանքների վերացման հարցում պատասխանատու սուբյեկտներին պարզելու
համար:

Գլուխ 2. Ներպետական օրենսդրությունը օգոստոսի 14-ին «Սուրմալու» առևտրի կենտրոնում տեղի ունեցած պայթյունի դեպքի առնչությամբ

38. ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 730-Լ որոշմամբ¹¹ հաստատված «Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի» կանոնադրության 11-րդ կետի 1-ին ենթակետով սահմանվում են հրդեհային և տեխնիկական անվտանգության ապահովման բնագավառում տեսչական մարմնի լիազորությունները, որոնց թվին է դասվում, ի թիվս այլնի, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների, ինչպես նաև պաշտոնատար անձանց կողմից հրդեհային և տեխնիկական անվտանգության նորմատիվ փաստաթղթերի պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացումը, ինչպես նաև կազմակերպությունների, արտադրական տեղամասերի, առանձին ագրեգատների աշխատանքի, շենքերի, շինությունների շինարարության, վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման աշխատանքները, ինչպես նաև շենքերի և շինությունների շահագործման ամբողջովին կամ մասնակի դադարեցումը՝ հրդեհային անվտանգության նորմատիվ փաստաթղթերի պահանջների այն խախտումների դեպքում, **որոնք անմիջականորեն և ուղղակի սպառնալիք են ստեղծում հրդեհների առաջացման և (կամ) մարդկանց անվտանգության համար:**



¹¹ Հղումը՝ <https://www.arlis.am/documentview.aspx?docid=123285>

39. Այսպիսով, ակնհայտ է, որ հրդեհային և տեխնիկական անվտանգության ապահովման բնագավառում տեսչական մարմնի լիազորությունների մեջ է մտնում կանոնադրությամբ սահմանված շենքերի և շինությունների շահագործման ամբողջովին կամ մասնակի դադարեցումը, ի թիվս այլնի՝ նաև մարդկանց անվտանգության ապահովման նպատակով:

40. Միաժամանակ անդրադառնալով ներպետական օրենսդրությանը՝ հարկ է արձանագրել, որ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

«Ստուգող մարմնի պաշտոնատար անձը ստուգման ակտի հիման վրա, օրենքով սահմանված իր իրավասությունների շրջանակներում, փնտեսավարող սուբյեկտին տալիս է **հանձնարարականներ (կարգադրագրեր) բացահայտված խախտումների և թերությունների վերացման ուղղությամբ՝ սահմանելով ժամկետներ դրանց վերացման համար:**»:

41. Նույն իրավական ակտի 4-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝

«Միևնույն պետական մարմնի կողմից միևնույն փնտեսավարող սուբյեկտում և միևնույն բնագավառում ստուգումները՝ **կախված փնտեսավարող սուբյեկտի ռիսկայնության աստիճանից**, իսկ քաղաքաշինության բնագավառում իրականացվող ստուգումների դեպքում՝ միևնույն քաղաքաշինական օբյեկտում՝ կախված քաղաքաշինական օբյեկտի ռիսկայնության աստիճանից, իրականացվում են հետևյալ հաճախականությամբ՝

1) բարձր ռիսկայնության սուբյեկտների մոտ, իսկ քաղաքաշինության բնագավառում իրականացվող ստուգումների դեպքում՝ քաղաքաշինական օբյեկտներում՝ **ոչ ավելի հաճախ, քան տարին 1 անգամ:**»:

42. Միաժամանակ, նույն հոդվածի 3.1. մասի 1-ին և 1.1-ին կետերի համաձայն՝

«3.1. Սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված **սահմանափակումները չեն տարածվում այն դեպքերի վրա, երբ՝**

1) **լրացել է** ստուգում իրականացնող անձի կամ ստուգում իրականացնող պետական մարմնի կողմից փնտեսավարող սուբյեկտին օրենքով նախատեսված իրավասությունների շրջանակներում տրված նախկին ստուգմամբ հայտնաբերված **թերությունների և խախտումների վերացման վերաբերյալ հանձնարարականի (կարգադրագրի) ժամկետը:**

1.1) **իրականացվում են** ստուգում իրականացնող անձի կամ ստուգում իրականացնող պետական մարմնի կողմից տնտեսավարող սուբյեկտին օրենքով նախատեսված իրավասությունների շրջանակներում տրված նախկին ստուգմամբ հայտնաբերված թերությունների և **խախտումների վերացման վերաբերյալ հանձնարարականի (կարգադրագրի) պահանջների կատարման փաստացի վիճակը պարզելուն ուղղված ստուգումներ**»:

43. Ավելին՝ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի դ) կետի համաձայն՝

«Տնտեսավարող սուբյեկտի պաշտոնատար անձինք պարտավոր են՝

դ) սահմանված ժամկետում վերացնել ստուգման արդյունքների ակտում նշված թերությունները և խախտումները՝ **այդ մասին գրավոր հայտնելով ստուգող մարմնին**»:

44. Ամփոփելով հարկ է արձանագրել, որ որպես տեխնիկական և հրդեհային անվտանգության ապահովման բնագավառում վերահսկողության իրականացման եղանակ՝ ստուգումների կազմակերպման գործընթացը կանոնակարգված է համապատասխան իրավական ակտի շրջանակներում: Նկատի ունենալով ՄԻԵԴ կողմից արտահայտված դիրքորոշումն առ այն, որ պետությունը կրում է պոզիտիվ պարտականություն ստեղծելու համապատասխան իրավական դաշտ գործունեության որոշակի տեսակներով զբաղվելու դեպքում վերահսկողության ապահովման նպատակով՝ հարկ է արձանագրել, որ տվյալ պարագայում առկա է իրավական ակտ, որում կանոնակարգվում են ստուգումների իրականացմանը վերաբերող իրավահարաբերությունները:

45. Ավելին՝ նկատի ունենալով ոլորտային առանձնահատկությունները, «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի շրջանակներում սահմանվել են նաև ստուգումների արդյունքում հայտնաբերված խախտումների արձանագրումից հետո իրավասու սուբյեկտների կողմից կատարման ենթակա գործողությունների վերաբերյալ կարգավորումներ: Մասնավորապես՝ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի դ) կետով սահմանված են տնտեսավարող սուբյեկտի պաշտոնատար անձանց պարտավորությունները, որոնց թվին են դասվում, ի թիվս այլնի,

սահմանված ժամկետում ստուգման արդյունքների ակտում նշված թերությունները և խախտումները **վերացնելը՝ այդ մասին գրավոր հայտնելով ստուգող մարմնին:**

46. Միաժամանակ, օրենսդրի կողմից իրավասություն է վերապահվել ստուգում իրականացնող պաշտոնատար անձանց՝ ստուգողական գործողություններ իրականացնել անկախ վկայակոչված իրավական ակտով նախատեսված ստուգումների պարբերականությանը վերաբերող սահմանափակումներից, եթե (1) լրացել է ստուգում իրականացնող անձի կամ ստուգում իրականացնող պետական մարմնի կողմից տնտեսավարող սուբյեկտին օրենքով նախատեսված իրավասությունների շրջանակներում տրված նախկին ստուգմամբ հայտնաբերված թերությունների և խախտումների վերացման վերաբերյալ հանձնարարականի (կարգադրագրի) ժամկետը, ինչպես նաև այն դեպքում, (2) երբ իրականացվում են նախկին ստուգմամբ հայտնաբերված թերությունների և խախտումների վերացման վերաբերյալ հանձնարարականի (կարգադրագրի) պահանջների կատարման փաստացի վիճակը պարզելուն ուղղված ստուգումներ:

47. **Ամփոփելով՝ հարկ է արձանագրել, որ օրենսդրի կողմից սահմանված գործիքակազմի շրջանակներում տնտեսավարող սուբյեկտը կրել է հանձնարարագրում նշված խախտումները վերացված լինելու վերաբերյալ տեղեկությունների ներկայացման պարտավորություն, իսկ իրավասու պետական մարմինը լիազորված է եղել անկախ ստուգման պարբերականությանը վերաբերող սահմանափակումներից՝ իրականացնել հանձնարարականի պահանջների կատարման փաստացի վիճակը պարզելուն ուղղված ստուգողական գործողություններ:**

48. Նկատի ունենալով, որ տեսչական մարմնի կողմից վերահսկվում է կարգադրագրի պահանջների կատարման փաստացի վիճակը, ինչպես նաև այն, որ տնտեսավարող սուբյեկտները կրում են պարտավորություն թերությունները և խախտումները վերացնելու մասին գրավոր հայտնել ստուգող մարմնին՝ հարկ է ընդգծել, որ տեսչական մարմնի կողմից ստուգմամբ արձանագրված խախտումները վերացված լինելու կամ չլինելու վերաբերյալ տեղեկությունը վերջինիս հայտնի է դառնում կարգադրագրում մատնանշված ժամկետը լրանալուց անմիջապես հետո:

49. Այսպիսով՝ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3.1.-ին կետում վկայակոչված հիմքերից

երկուսն էլ հնարավորություն են ընձեռում տեսչական մարմինն՝ կարգադրագրում նշված ժամկետը լրանալու պահից նախաձեռնել կարգադրագրի պահանջների կատարման փաստացի վիճակը պարզելուն ուղղված վերահսկողական գործողություններ: **Նկատի ունենալով ստուգողական գործողությունների իրականացման պարբերականության վերաբերյալ սահմանափակումների բացակայությունը՝ հարկ է արձանագրել, որ որևէ օրենսդրական արգելք առկա չէ կարգադրագրում նշված ժամկետը լրանալու պահից նոր ստուգողական գործողության մեկնարկման համար:**

50. ՄԻԵԴ նախադեպային իրավունքի լույսի ներքո դիտարկելով զեկույցի այս հատվածում բարձրացված խնդիրը՝ հարկ է արձանագրել, որ, ըստ էության, պետության կողմից ապահովվել է օրենսդրական անհրաժեշտ հիմքերի նախատեսման պոզիտիվ



պարտականության կատարումը, որն ուղղված է անձանց կյանքի իրավունքի պաշտպանությանը, միաժամանակ, պետությանն, ի դեմս տեսչական մարմնի, չի հաջողվել ապահովել նախատեսված իրավական մեխանիզմների արդյունավետ կիրառումը՝ ինչի արդյունքում, պատշաճ հսկողության բացակայության պայմաններում տեղի ունեցած պայթյունի հետևանքով, մահացել է 16 անձ, մեկ անձ անհետ կորած է, բազմաթիվ անձանց առողջությանը պատճառվել են տարբեր աստիճանի վնասներ, անձինք կրել են գույքային կորուստներ:

51. Այսպիսով, ամփոփելով զեկույցի սույն գլխում ներկայացված վերլուծությունները՝ հարկ է արձանագրել, որ տեսչական մարմնի կողմից բավարար հետևողականություն չի դրսևորվել առևտրի կենտրոնում հայտնաբերված խախտումների վերջման գործընթացի նկատմամբ, չնայած այն հանգամանքին, որ օրենսդրական որևէ արգելք, սահմանափակում առկա չի եղել: Ավելին՝ օրենսդրի կողմից բացառություններ են նախատեսվել՝ սահմանելով դեպքերը, երբ իրավասու մարմնի

համար կիրառելի չեն ստուգումների իրականացման պարբերականությանը վերաբերող սահմանափակումները՝ այդպիսով հնարավորություն ընձեռելով համապատասխան սուբյեկտներին իրենց վերահսկողական գործիքակազմը կիրառել առանց ստուգումների միջև ընկած նվազագույն ժամկետների պահպանման:

Գլուխ 3. Ներպետական օրենսդրությունը սեպտեմբերի 21-ին «Սուրմալու» առևտրի կենտրոնում տեղի ունեցած փլուզման դեպքի առնչությամբ

52. Ինչպես ներկայացվել է զեկույցի նախորդ հատվածում՝ առևտրի կենտրոնում տեղի ունեցած պայթյունին հաջորդել է պայթյունի հետևանքով վնասված շինության փլուզումը, ինչի արդյունքում վնաս է պատճառվել անձանց առողջությանը և գույքին:

53. Միաժամանակ, նկատի ունենալով, որ օգոստոսի 14-ին տեղի ունեցած պայթյունի առնչությամբ իրավապահ մարմինների կողմից նախաձեռնվել էր քրեական վարույթ, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ քրեական վարույթի ընթացքում հնարավոր է քննչական կամ ապացուցողական գործողությունների կատարման անհրաժեշտությամբ պայմանավորված սահմանափակված լինել (հնարավոր չլինել) պայթյունի հետևանքով վնասված շինության կողմից սպառնացող վտանգի չեզոքացումը՝ Պաշտպանի կողմից գրություն էր հասցեագրվել ՀՀ գլխավոր դատախազություն՝ պարզելու համար՝ ի՞նչ փուլում է գտնվում քրեական վարույթը, ինչ հանգամանքներ են հայտնի դարձել և **արդյո՞ք առևտրի կենտրոնի վնասված շինությունների ապամոնտաժման գործողություններ չիրականացնելը պայմանավորված է եղել քննչական կամ ապացուցողական գործողությունների կատարման, այդ թվում՝ համապատասխան փորձաքննություններն իրականացնելու անհրաժեշտությամբ:**

54. Ի պատասխան ներկայացվել է տեղեկություն, որ դեռևս 16.09.2022թ. փորձաքննություն իրականացնող փորձագետների կողմից հայտնվել է, որ տարածքում աշխատանքներն ամբողջ ծավալով կատարվել են և **նշված շինությունների հետագա տեղազննման անհրաժեշտություն առկա չէ:**

55. Այսպիսով, նկատի ունենալով պետության պոզիտիվ պարտականությունն անձանց կյանքի իրավունքի ապահովման ուղղությամբ գործուն միջոցներ ձեռնարկելու առումով՝ հարկ է արձանագրել, որ պայթյունի հետևանքով վնասված շինությունը քրեական վարույթի շրջանակներում անհրաժեշտ փորձաքննությունների ավարտից հետո չի ապամոնտաժվել, որևէ գործողություն չի կատարվել հանրային անվտանգության ապահովման նպատակով, ինչի արդյունքում սեպտեմբերի 21-ին տեղի է ունեցել փլուզում:

56. Այս առնչությամբ Պաշտպանի կողմից գրություններ են հասցեագրվել ԱԻՆ և Երևանի քաղաքապետարանին՝ պարզելու համար՝ պայթյունից հետո վերջիններիս կողմից ինչ գործողություններ են իրականացվել: Մասնավորապես՝ ի՞նչ գործողություններ են իրականացվել պայթյունից հետո անձանց կյանքին և առողջությանը վտանգ սպառնացող շինությունն ապամոնտաժելու, կամ այդ շինության փլուզումը կանխելու, կամ այն մեկուսացնելու ուղղությամբ:

57. Ի պատասխան Պաշտպանի հարցման Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացվել է հետևյալ տեղեկատվությունը. «(...) *տեղեկացնում եմ, որ Երևան քաղաքի «Սուրմալու» առևտրի կենտրոնում տեղի ունեցած պայթյունից հետո, հրդեհաշիջման և անհետաձգելի վթարային և փրկարարական աշխատանքների ընթացքում Երևանի քաղաքապետարանն իր ստորաբաժանումներով ապահովել է աշխատանքներին ներգրավված ուժերին անհրաժեշտ տեխնիկայով (վերամբարձ կոունկ, տրակտոր ինքնաթափ և ամբարձիչ), ինչպես նաև ջրատարներով: Երևանի քաղաքապետարանի կողմից իրականացվել են նաև փլուզումից հետո առաջացած աղբի մաքրման աշխատանքներ: 30.09.2022 թվականին՝ 6162քմ մակերեսով մասնաշենքի համար տրամադրվել է հ.01/18-Դ-83025-77 քանդման թույլտվություն և համաձայնեցվել է հ.01/18-05/2-Դ-83025-1010 քանդման նախագիծը:»:*

58. Ի պատասխանի Պաշտպանի հարցման ԱԻՆ կողմից ներկայացվել է հետևյալ տեղեկատվությունը. «(...) *Որոնողափրկարարական աշխատանքների ավարտին հաջորդող երկու օրվա ընթացքում ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության կողմից իրականացվել է այդ պահի դրությամբ վտանգ ներակայացնող բոլոր կառուցարարների ապամոնտաժում:*

Փլուզման գոտում առկա մյուս շինությունները պետք է ապամոնտաժվեր տարածքի սեփականատիրոջ կողմից՝ համապատասխան տեսչական մարմինների հսկողությամբ: Հետագայում շինությունն ապամոնտաժելու ամբողջ ընթացքում ԱԻՆ ՓԾ ստորաբաժանումների կողմից իրականացվել է հերթապահություն:»:

59. Միաժամանակ, ԱԻՆ կողմից ներկայացվել է տեղեկություն առ այն, որ ԱԻՆ կողմից Երևանի քաղաքապետարան, Ոստիկանություն, Քննչական կոմիտե, Քաղաքաշինության կոմիտե հասցեագրված տեղեկանքում ներկայացվել է «Սուրմալու

առևտրի կենտրոնի» կիսափլուզված շենքերի և շինությունների շուրջը անվտանգության գոտի սահմանելու և ապամոնտաժելու վերաբերյալ տեղեկատվություն:

60. Վերոգրյալ տեղեկանքով ԱԻ նախարարությունն առաջարկել է՝

- «Սուրմալու առևտրի կենտրոն» տարածքում փլուզված և կիսափլուզված շենքերի շուրջը ստեղծել անվտանգության գոտի և արգելել մարդկանց մուտքը և ելքը: Անվտանգության գոտին Քրիստափոր փողոցի կողմից պետք է տեղադրել փլուզված շենքից ոչ պակաս 14 մ հեռավորության վրա: Նման պայմաններում հնարավոր է թույլատրել Քրիստափոր փողոցի երկկողմանի երթևեկությունը: Արշակունյաց պողոտայի կողմից անվտանգության գոտին տեղադրել առկա աղբակույտի եզրագծով, որում պետք է ներառվի նաև կիսափլուզված երկհարկանի մասնաշենքը:

- 2022թ օգոստոսի 14-ին «Սուրմալու առևտրի կենտրոնի» հիմնական մասնաշենքում տեղի ունեցած պայթյունի հետևանքով վնասված շենքերը և շինությունները ենթակա չեն վերականգնման և վերակառուցման, ուստի անվտանգության տեսակետից անհրաժեշտ է իրականացնել դրանց ապամոնտաժումը: Ապամոնտաժումը պետք է իրականացնել սահմանված կարգով հաստատված նախագծով, որն իր մեջ պարտադիր պետք է ներառի աշխատանքների կազմակերպման նախագիծը, որով պետք է նախատեսվեն.

- կոնստրուկցիաների քանդման հաջորդականությունը,

- անվտանգության միջոցառումները, ներառելով ինքնափլուզման ենթակա կոնստրուկցիաների ժամանակավոր ամրացումը,

- մեքենաների և մեխանիզմների տիպերը:

Եռհարկանի շինության ապամոնտաժումը խորհուրդ է տրվել իրականացնել նաև պայթեցման եղանակով:

61. Այսպիսով, ԱԻ նախարարության կողմից փաստացի արձանագրվել է, որ որոշակի ապամոնտաժման աշխատանքներ կատարվել են, այդուհանդերձ, պայթյունի արդյունքում վնասված շինության ապամոնտաժումը պետք է իրականացվեր դրա սեփականատիրոջ կողմից՝ համապատասխան մարմնի հսկողության ներքո: Ավելին՝ այդ առնչությամբ ԱԻ նախարարության կողմից իրավասու մարմիններին է ներկայացվել տեղեկանք՝ այդ թվում նաև ապամոնտաժման աշխատանքների իրականացման առաջարկությամբ:

62. Ամփոփելով՝ հարկ է արձանագրել, որ հանրության համար վտանգ ներկայացնող շինության օպերատիվ կերպով մեկուսացման և ապամոնտաժման աշխատանքների իրականացման լիազորությունների հստակ կառուցակարգի բացակայության պայմաններում՝ առկա է օրենսդրական կարգավորման խնդիր: Ըստ էության, գործող կարգավորումները հնարավորություն չեն ընձեռում հանրության համար վտանգ սպառնացող՝ ոչ պետական (համայնքային) սեփականություն հանդիսացող գույքի՝ անհրաժեշտության դեպքում օպերատիվ կերպով ապամոնտաժման համար:

63. Միանշանակ է, որ նման դեպքերում պետության կողմից միջամտության իմպերատիվ կարգավորումների բացակայությունը կարող է հանգեցնել անձանց մի շարք իրավունքների՝ ընդհուպ կյանքի և առողջության իրավունքների խախտման, ինչն, ըստ էության, հանգեցնում է պետության պոզիտիվ պարտականության՝ անձանց կյանքի և առողջության իրավունքների ապահովման, խախտման:

64. Միաժամանակ, հատկանշական է, որ գործող իրավական կառուցակարգերի որոշակի մեկնաբանությունը ևս կարող էր վճռական լինել տվյալ դեպքում անձի սեփականության իրավունքի իրացմանը պետության կողմից անհրաժեշտ միջամտության իրականացման համար: Խոսքն անձի սեփականություն հանդիսացող¹² գույքի նկատմամբ միջամտության մասին է:

65. Այսպես՝ «Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի կարգավորման առարկան հանրային գերակա շահի որոշման կարգը, հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման կարգը և օտարվող սեփականության դիմաց փոխհատուցման տրման կարգն է:

66. Որպես սեփականության իրավունքի նկատմամբ իրականացվող միջամտություն՝ հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարումը պետք է դիտարկել նման միջամտության իրավաչափության և համաչափության համատեքստում:

¹² «ԵՐԵՎԱՆԻ ՊԱՀԱԾՈՆԵՐԻ ԳՈՐԾԱՐԱՆ» ՓԲ ընկերությունը գրանցված է ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրում ըստ վերջինիս պաշտոնական կայքում առկա տեղեկությունների:

Հղումը՝ <https://www.e-register.am/am/companies/1392849>

67. Սահմանադրության 60-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝

«Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարումն իրականացվում է օրենքով սահմանված բացառիկ դեպքերում և կարգով՝ միայն նախնական և համարժեք փոխհատուցմամբ:»:

68. 2005թ. Սահմանադրության՝ համանման բովանդակություն ունեցող 31 հոդվածի 3-րդ մասի կապակցությամբ Սահմանադրական դատարանը՝ 2006թ. ապրիլի 18-ի թիվ ՍԴՈ-630 որոշմամբ մատնանշել է, որ այդ դրույթի սահմանադրաիրավական բովանդակությունից հետևում է, որ.

«(...) - Սահմանադրությունը նախատեսում է սեփականատիրոջ սեփականության իրավունքի սահմանափակման և սեփականության հարկադիր օտարման հնարավորություն,

- վերջինս կարող է իրականացվել միակ նպատակի համար՝ երբ առկա է հասարակության և պետության կարիքը, որը պետք է լինի կոնկրետ և հստակորեն արտահայտված որոշակի սեփականության առնչությամբ, և որը պետությունը պարտավոր է, իր գործառույթներն իրականացնելիս, հաշվի առնել ու բավարարել,

*- սակայն հասարակության և պետության ամեն մի կարիք սեփականության օտարման հիմք չի կարող հանդիսանալ, այդ կարիքները պետք է լինեն **բացառիկ՝ պայմանավորված գերակա հանրային շահով,***

- սեփականության օտարման կարգը պետք է սահմանված լինի օրենքով,

(...)

- սեփականության օտարման դեպքում պետք է երաշխավորված լինի նախնական փոխհատուցումը,

- այդ փոխհատուցումը պետք է լինի համարժեք:»:

69. Սահմանադրական այս պահանջների մեջ բացառիկ՝ գերակա հանրային շահի ամրագրումը, մի կողմից սեփականության իրավունքի պաշտպանության երաշխիք է, քանի որ այլ դեպքերում սեփականության օտարումը կլինի հակասահմանադրական, մյուս կողմից՝ պետության համար սահմանափակում է օտարված սեփականությունն այլ նպատակով օգտագործելու հնարավորությունը:

70. Նկատի ունենալով սեփականության իրավունքի միջամտության առնչությամբ ՄԻԵԴ կողմից ձևավորված կայուն նախադեպային պրակտիկան՝ հարկ է հղում կատարել

նաև Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի վերաբերյալ տրված մեկնաբանություններին:

71. Մասնավորապես՝ հանրային շահից բխող սեփականության օտարմանը բազմիցս անդրադարձել է ՄԻԵԴ-ը՝ վկայակոչելով երեք պայման, որոնք անհրաժեշտ են նման օտարման համատեղելիությունը կոնվենցիայի պահանջների հետ ապահովելու համար:

72. Դատարանը նշում է, որ թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի հետ համատեղելի լինելու համար օտարմանն ուղղված միջոցառումը պետք է բավարարի հետևյալ երեք պայմանները. այն պետք է իրականացվի ազգային իշխանությունների կողմից ցանկացած կամայական գործողություն բացառող՝ «օրենքով նախատեսված պայմաններին համապատասխան», պետք է բխի «հանրային շահերից», ինչպես նաև դրանով պետք է հաստատվի արդարացի հավասարակշռություն սեփականատիրոջ իրավունքների և համայնքային շահերի միջև (ի թիվս այլ վճիռների, Վիստինսը և Պերեպյոլկինսն ընդդեմ Լատվիայի [ՄՊ] [Vistins and Perepjolkins v. Latvia [GC]], թիվ 71243/01, § 94, 2012 թվականի հոկտեմբերի 25, Օսմանյանը և Ամիրադյանն ընդդեմ Հայաստանի (Գանգատ թիվ 71306/11), 2018թ.հոկտեմբերի 11, կետ 50):

73. Անդրադառնալով «հանրային շահ» եզրույթին ՄԻԵԴ կողմից արձանագրվել է, որ, քանի որ ազգային իշխանություններն անմիջականորեն տեղեկացված են իրենց հասարակության ու դրա կարիքների մասին, ընդհանուր առմամբ, նրանք միջազգային դատավորներից ավելի լավ կարող են գնահատել, թե որն է «հանրային շահը»: Կոնվենցիայով սահմանված պաշտպանության համակարգի համաձայն՝ ազգային իշխանությունները պետք է իրականացնեն հանրությանը մտահոգող խնդրի առկայության նախնական գնահատում՝ հիմնավորելով գույքից զրկելու միջոցառումները: **Այստեղ, ինչպես մյուս այն ոլորտներում, որոնց վրա տարածվում են Կոնվենցիայի երաշխիքները, ազգային իշխանությունները համապատասխանաբար ունեն հայեցողական լիազորությունների որոշակի շրջանակ:** Ավելին, «հանրային շահը» միանշանակ լայն հասկացություն է: (...) Դատարանը, բնական համարելով այն փաստը, որ սոցիալական և տնտեսական քաղաքականությունների իրականացման համար օրենսդրի հայեցողական լիազորությունների շրջանակը պետք է լինի լայն, կհարգի օրենսդրի որոշումն

այն մասով, թե որն է «հանրային շահը», եթե այդ որոշումն ակնհայտ անհիմն չէ (տե՛ս *Բեյելերն ընդդեմ Իտալիայի* [ՄԴ] [*Beyeler v. Italy* [GC]], թիվ [33202/96](#), § 112, ՄԻԵԴ 2000-Ի եւ վերետուժ հիշատակված՝ *Վիստինշի եւ Պերեսպոլկինսի գործը*, § 106):

74. Միաժամանակ, անդրադառնալով ներպետական իրավակարգավորումներին՝ հարկ է հղում կատարել «Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի համապատասխան դրույթներին.

75. Այսպես 4-րդ հոդվածի 1-ին մասի ա-ից գ) կետերի համաձայն՝

«1. Հանրության գերակա շահի որոշման սկզբունքներն են՝

ա) հանրության շահը պետք է գերակա լինի օտարվող սեփականության սեփականատիրոջ շահերից.

բ) հանրության գերակա շահի արդյունավետ իրագործումը չի կարող ապահովվել առանց փվյալ սեփականության օտարման.

գ) հանրության գերակա շահից ելնելով՝ սեփականության օտարումը չպետք է չհիմնավորված վնաս պատճառի սեփականատիրոջը.»:՝

76. Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝

«2. Գերակա հանրային շահը կարող է հետապնդել հետևյալ նպատակները՝

ա) պետության պաշտպանության, պետության ու **հասարակության անվտանգության ապահովումը.**

(...)

է) **անձանց կյանքի, առողջության կամ սեփականության պաշտպանությունը.**

ը) **արտակարգ իրավիճակների կանխումը, արտակարգ իրավիճակների հնարավոր հետևանքների նվազեցումը, արտակարգ իրավիճակների հետևանքների վերացումը.»:՝**

77. Այսպիսով՝ ամփոփելով օրենսդրի կողմից նախանշված նպատակները որոնք կարող են հետապնդվել գերակա հանրային շահով, ինչպես նաև համադրելով ՄԻԵԴ կողմից արձանագրված ազգային իշխանությունների հայեցողական լիազորությունների լայն շրջանակը՝ հարկ է ընդգծել, որ այն թե ինչն է համարվում գերակա հանրային շահ ենթակա է գնահատման պետության կողմից, և սույն դեպքում, որպես գերակա հանրային շահով հետապնդվելիք նպատակներ առանձնացված են, ի թիվս այլնի, հասարակության անվտանգության ապահովումը, անձանց կյանքի, առողջության կամ սեփականության

պաշտպանությունը, ինչպես նաև արտակարգ իրավիճակների կանխումը, արտակարգ իրավիճակների հնարավոր հետևանքների նվազեցումը, արտակարգ իրավիճակների հետևանքների վերացումը:

78. Ուստի՝ պետությունը, ուրվագծելով գերակա հանրային շահով հետապնդվող նպատակները, արձանագրել է, որ անձանց սեփականության իրավունքին միջամտության իրականացման հիմք կարող է հանդիսանալ նաև հասարակության անվտանգության ապահովումը, անձանց կյանքի, առողջության կամ սեփականության պաշտպանությունը, ինչպես նաև արտակարգ իրավիճակների կանխումը, արտակարգ իրավիճակների հնարավոր հետևանքների նվազեցումը, արտակարգ իրավիճակների հետևանքների վերացումը:

79. Այսինքն, պետությունն առնվազն տիրապետել է վերը նկարագրված մեխանիզմին՝ այն է՝ նշված շինության ապամոնտաժումն իրականացնել որպես հանրային գերակա շահի ապահովում այնն օտարելուց հետո, տեղի ունեցած պայթյունի հետևանքների նվազեցման և վերացման նպատակով անձանց սեփականության իրավունքի նկատմամբ միջամտություն իրականացնելու համար:

80. Պաշտպանի կողմից ի գիտություն է ընդունվում նաև այն հանգամանքը, որ ՀՀ ԱԻ նախարարության կողմից օգոստոսի 14-ին տեղի ունեցած պայթյունից հետո շրջանառվել¹³ է օրենսդրական փոփոխության նախագիծ, որի ընդունման հիմնավորումներում, մասնավորապես շարադրվում է՝ 2022 թվականի օգոստոսի 14-ին Երևան քաղաքի «Սուրմալու» առևտրի կենտրոնում տեղի ունեցած խոշոր աղետով պայմանավորված և հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2022թ.-ի օգոստոսի 19-ի թիվ 01/10.3/27493-2022 հանձնարարականը հրագործական նյութերի, արտադրանքների (պիրատեխնիկա, սիլիտրա և այլ պայթյունավտանգ նյութեր/ապրանքներ) ներկրման, արտադրության, պահեստավորման, առևտրի և կիրառման գործառույթները, որպես լիցենզավորման ենթակա գործունեության տեսակ դարձնելու հետ կապված համապատասխան իրավական ակտերի նախագծերի մշակման աշխատանքները նախաձեռնելու, ինչպես նաև «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքով Նախարարությանը

¹³ Հղումը՝ <https://www.e-draft.am/projects/4761>

վերապահված պայթուցիկ նյութերին վերաբերող լիցենզավորման ենթակա գործընթացներին զուգահեռ նաև դրանց ներկրումը, պահեստավորումը և կիրառումը (շահագործումը) լիցենզավորման կանոնակարգման դաշտ ներառելու նպատակահարմարության հարցը քննարկելու վերաբերյալ՝ առաջացել է սույն օրենքների փաթեթի ընդունման անհրաժեշտությունը:

81. Միաժամանակ, նախագծի ընդունումը հիմնավորվում է նրանով, որ հրագործական նյութերի արտադրությունը, ներմուծումը և առևտուրն իրենց մեջ պարունակում են **անվտանգության, առողջապահական և այլ բաղադրիչներ**, ուստի անհրաժեշտություն է առաջացել գործընթացը բերել լիցենզավորման դաշտ, ինչը հնարավորություն կտա **վերահսկողության ավելի գործուն միջոցներ ձեռնարկելու** և լիցենզիաների տրամադրման ելակետային չափորոշիչներ և պարտադիր պահանջներ սահմանելու համար:

82. Նկատի ունենալով այն հանգամանքը, որ ոլորտի քաղաքականության մշակողի կողմից նախաձեռնվել է օրենսդրական փոփոխություն վերահսկողության ավելի գործուն միջոցներ ձեռնարկելու համար՝ հարկ է արձանագրել, սույն զեկույցում բարձրացված օրենսդրական կարգավորման ենթակա խնդիրները ևս կարող են իրենց լուծումը ստանալ նախաձեռնության շրջանակներում:

V. Առաջարկություններ

83. Չնայած այն հանգամանքին, որ առկա են օրենսդրական բավարար հիմքեր ստուգումների իրականացումից հետո հայտնաբերված խախտումները վերացնելու ուղղությամբ ստուգողական գործողությունների կատարման համար՝ այդուհանդերձ այդ օրենսդրական կարգավորումներն արդյունավետ կերպով չեն կիրառվել իրավասու մարմնի կողմից: Այսպիսով, անհրաժեշտ է բարձրացված խնդրի լուծման ուղղությամբ ձեռնարկել միջոցներ՝ բացառելու համար օրենսդրության այնպիսի մեկնաբանությունն ու գործելակերպը, որ օրենսդրական բավարար մեխանիզմներ առկա չեն ստուգման արդյունքներով հայտնաբերված խախտումները վերացված լինելը ստուգելու համար: Ընդ որում, նշված խնդիրը չի պահանջում օրենսդրական լուծումներ, և այս հարցում պետությունը պետք է ցանկացած գործուն և արդյունավետ միջոցով բացառի նույնանման խնդիրների ի հայտ գալը կամ լուծի դրանք:

84. Նկատի ունենալով, որ զեկույցում ներկայացված՝ հանրային գերակա շահի ճանաչման մեխանիզմի գործարկմամբ անձի սեփականության իրավունքի սահմանափակման կառուցակարգը նման դեպքերում չի կարող ապահովել անհրաժեշտ օպերատիվություն և արդյունավետություն վրա հասած մարտահրավերներին դիմակայելու համար՝ առաջարկվում է օրենսդրական մեխանիզմների նախատեսմամբ բացառել այնպիսի իրավիճակները, երբ հանրությանը վտանգ սպառնացող գույքի (անձի սեփականության իրավունքի նկատմամբ միջամտությամբ) ապամոնտաժման վերաբերյալ որոշման կայացումը կմնա բացառապես սեփականատիրոջ հայեցողությանը: Մասնավորապես՝ որպես նման կառուցակարգ կարող է նախատեսվել տեղական ինքնակառավարման մարմինների գործադիր մարմնի ղեկավարի՝ համապատասխան իրավասու մարմնի (որպես հնարավոր տարբերակ կարելի է դիտարկել ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունը) հիմնավոր եզրակացության հիման վրա քանդման վերաբերյալ որոշում կայացնելու իրավասությունը՝ ապահովելով սեփականության իրավունքի սահմանափակման սահմանադրականությանը վերաբերող պահանջների պահպանումը: